N 01101-1454

«06» 11 2024

«Փրիթի ՈՒԵյ» ՍՊԸ

հասցե՝ Ք Երևան Ծ Իսակով 48/1

Էլ. փոստ՝ b2bvesta@gmail.com

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Փրիթի ՈՒԵյ» ՍՊԸ-ի միջև 16.10.2024թ. կնքված N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ԷՏ-5-2 ծածկագրով գնման պայմանագրի 1.1-ին կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի **<u>մասնակի</u>** հրաժարվում է կնքված պայմանագրերից համարելով այն լուծված՝ 545160 (հինգ հարյուր քառասուն հինգ հազար հարյուր վաթսուն) ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ

որում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տաս օրացուցային օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:
Ընդ որում, եթե՝ «Փրիթի ՈՒեյ» ՍՊԸ-ն սույն ծանուցումը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում մինչև 14.11.2024 թ. ներառյալ՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900018001876 հաշվեհամարին վճարի 56000 (հիսուն վեց հազար) ՀՀ դրամ որպես տուժանք պայմանագրի կատարման ապահովում և 84000 (ութսուն չորս հազար) ՀՀ դրամ որպես որակավորման ապահովումները, ապա ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվեհամարին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել «ՀՊՏՀ» ՊՈԱԿ-ի գնումների բաժին՝ 502 սենյակ:

Ռեկտորի պարտականությունները կատարող Մ. Ասլանյան

Կատարող՝ Նորայր Վարդանյան

Գնումների բաժնի պետ

Հեռախոս 010 593 483
Էլ. փոստ gnumner.asue@mail.ru